Անշարժ գույքի (բնակարան, բնակելի տուն) ձեռք բերման նպատակով, տրամադրվելիք վարկերի ապահովման միջոց հանդիսացող գրավի պայմանագրերում, վարկի տրամադրման նպատակը նշելու վերաբերյալ

2007-12-28

Հայաստանի Հանրապետության տարածքում
գործող բանկերին

Անշարժ գույքի (բնակարան, բնակելի տուն) ձեռք բերման նպատակով, տրամադրվելիք վարկերի ապահովման միջոց հանդիսացող գրավի պայմանագրերում, վարկի տրամադրման նպատակը նշելու վերաբերյալ

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք,

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկին է դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն (հետագա շարադրանքում՝ Կոմիտե) հետևյալ խնդրանքով.

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան ուսումնասիրելու նպատակով Կոմիտեն մտադիր է իրականացնել հիփոթեքի պայմանագրերի քանակական վերլուծություններ: Կոմիտեն մասնավորապես ցանկանում է ուսումնասիրել անշարժ գույքի ձեռքբերման նպատակով կնքված հիփոթեքի պայմանագրերի մասնաբաժինը հիփոթեքի պայմանագրերի ընդհանուր զանգվածի մեջ: Սակայն, ըստ Կոմիտեի գրավի պայմանագրերում հաճախ չի նշվում վարկի տրամադրման նպատակը, որի հետևանքով հնարավոր չի լինում հստակ վերլուծություն կատարել: Կոմիտեն գտնում է, որ գրավի պայմանագրերում վարկի տրամադրման նպատակի մասին նշում կատարելը մեծապես կնպաստի նշված վերլուծությունների արդյունավետության բարձրացմանը:

Կարծում ենք, որ գրավի պայմանագրերում վարկի տրամադրման նպատակը նշելը բանկերի և վարկային կազմակերպությունների համար որևէ անբարենպաստ

հետևանք չի առաջացնի:

Ելնելով վերոգրյալից և վերլուծություններ կատարելուն օժանդակելու նպատակով, խնդրում ենք այսուհետ անշարժ գույքի (բնակարան, բնակելի տուն) ձեռք բերման նպատակով տրամադրվելիք վարկերի ապահովման միջոց հանդիսացող գրավի պայմանագրերում հստակ նշել վարկի տրամադրման նպատակը:

Հարգանքներով՝ Տիգրան Սարգսյան

Սույն գրության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ստանալու համար կարող եք դիմել
ՀՀ Կենտրոնական բանկի իրավաբանական վարչության ֆինանսական համակարգի վերահսկողության
իրավական սպասարկման երկրորդ բաժնի պետ Վազգեն Մնացականյանին